ՀՏԴ 58

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՇԱԳԱՆԱԿԵՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՈՒՄ

Ռ.Ի.Առուշանյան
կենսաբանության ամբիոն

Հոդվածում հաղորդվում է մնացորդային (ռելիկտ) սովորական շագանակենու կուլտուրաները Լեռնային Ղարաբաղում արմատավորելու մասին, ճշտվում է նրա տարածվածության արիալը, նշվում բարձր արտադրողականությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարուստ ֆլորան տարբերվում է պտղաբեր հատապտղիկաբեր և ընկույզապտղաբեր ձառաթիափունակների մեծ բազմազանությամբ: Այստեղ աճող թանկարժեք ծառատեսակների կազմում քիչ չեն մնացորդային (ռելիկտ) բույսերը, ինչպես օրինակ, չափազանց օգտակար սովորական շագանակենին (Castanea Sativa Nlill):

Սովորական շագանակենին պատկանում է հաճարածաղկավորների կարգի (Fagales), հաճարազգիների ընտանիքի (fagaceae): ԼՂՀ բնակլիմայական պայմաններում նա աճում է որպես առաջին մեծության ծառ, հասնում է ավելի քան 22մ բարձրության, 1.5-2մ հաստության, ունի լայնասաղարթ պսակ, լավ զարգացած արմատային համակարգ:

Շագանակենին միատուն բույս է, պտղաբույլը գնդաձև է, ուժեղ փշակալած պտղագավաթով, որը սովորաբար պարունակում է 3 (1-7) ազատ նստած պտուղներ (սերմեր, շագանակ): Նա բնութագրում է որպես արագաճող, բարձր արդյունավետ, երկարակյաց տնական չափազանց բարձրորակ բնափայտով: Համարվում է ջերմասեր բույս, ծովի մակերևույթից 1200մ չի բարձրանում, պահանջկոտ հողի, ինչպես նաև օդի խոնավության, ինչ որ չափով ստվերադիմացկուն է:

Սովորական շագանակենու տարածման արիալը ընդգրկում է միջերկրածովային շրջանները, Փոքր Ասիան, Կովկասի սևծովյան ափերը, գլխավորապես Սոչիի և Տուապսեի շրջանները, Աբխազիան և Աջարիան: Փոքր Կովկասի շրջաններում նրա տարածվածման արիալը սահմանափակվում է Վրաստանի Բորժոմու անտառներով:

1967թ. Մարտունու շրջանի, Ղարաբաղյան լեռնաշղթայի Քիրս լեռնագագաթի հյուսիսային լանջերի կաղնու-բոխու խառն անտառներում մենք հայտնաբերել ենք շագանակենու ծառույտները: Այդ հայտնագործությունը վկայում է այն, որ շագանակենու տարածման արիալը հարավում սահմանափակվում է ոչ թե Բորժոմու, այլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում: Մեր կողմից ուսումնասիրված շագանակենու ծառերը գբաղեցնում են անտառի առաջին և երկրորդ շարահարկերը: Ավելի քան 300 տարեկան ծառերի տրամագիծը կազմում է մոտ երկու մետր, բարձրությունը՝ 11-19 (21) մ:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում շագանակենու կուլտուրաները և բնական վերականգնումը Լեռնային Ղարաբաղի պայմաններում: Այստեղ շագանակենին տնկվել է Մարտունու շրջանի Նենգի գյուղի այգիներում մոտ 150 տարի առաջ: Ըստ մեր կողմից կատարված նյութական գնահատման 100 տարեկան կուլտուրայի միջին տրամագիծը կազմում է 73,8 սմ, միջին բարձրությունը 19մ: Ամենից հաստ ծառի տրամագիծը կազմում է 108 սմ, բարձրությունը՝ 22 մ:

Սովորական շագանակենին Լեռնային Ղարաբաղի տարածքում կուլտուրաների մեջ արմատավորելու համար Արցախ անտառի Տենավազի անտառպետության տարածքում շագակենու տեղում հավաքած սերմերի ցանք կատարեցինք: Տնկարանում մարտի վերջին ցանած սերմերը մայիս ամսին տվին առաջին ծիլերը: Հունիսի 2-ին ծիլերի երկարությունը կազմեց 8-15 սմ, հունիսի 20-ին՝ 10-18սմ: Հուլիսի 20-ին ծիլերի երկարությունը կազմել է 15-20 սմ (նկար-1), դրանից հետո աճը կանգնել է: Վեգետացիոն շրջանում ոռոգումը կատարվել է երկու անգամ: 15սմ երկարություն ունեցող սերմնաբույսը ունեցել է 37 սմ երկարություն ունեցող առանցքային արմատ, մեծ քանակությամբ տարբեր կողմեր թաքվող կողքային արմատներով:

Ցածր արտադրողականություն ունեցող արևելյան բոխու անտառը վերակառուցելու համար. մեր կողմից կատարվեց փորձնական տունկ, տուփի-լենտանտառային, մնացորդային կարքենատ, ծանր ավազա-կավային կազմի հողեր ունեցող տարածքում: Ծառատունկը կատարվել է շագանակենու երկու տարեկան տունկերով, 35սմ x 35սմ x 35սմ չափերով փոսերում, վերակառուցվող անտառի 10 մետրանոց լայնություն ունեցող միջանցքներում: Չնայած երկու տարի շարունակվող երաշտին՝ կուլտուրաների պահպանվածությունը կազմեց 91%:

Հաջողությամբ է աճում շագանակենին ծովի մակերևույթից 700-800մ բարձրություններում: 14 տարեկան ոռոգվող կուլտուրաները այստեղ սկսել են պտղաբերել 7 տարեկան հասակից: Նշված հասակի ծառերի միջին բարձրությունը կազմել է 5,6 մ, միջին տրամագիծը 12,4 սմ, տարեկան աճը ըստ բարձրության 0,40մ, ըստ տրամագծի 0,88 սմ:

Ինչ վերաբերվում է շագանակենու բնական վերականգնմանը, նշենք, որ Ննգի գյուղի տարածքի բուսականությունն ուսումնասիրելու ժամանակ մենք, սալորենու, տխլենու, կաղնու, ալոճենու, մասրենու, իլենու, մոշենու մացառուտներում հայտնաբերել ենք մի քանի 10-12 տարեկան շագանակենու երիտասարդ ծառեր, որոնք տվել են առատ բերք (աղյուսակ 1):

Շագանակենու բնական վերականգնումը:

N N	տրամագիծը կծքի բարձրության վրա սմ	բարձրությունը մ	հասակը տարի	աճը ըստ բարձրության մ	աճը ըստ տրամագծի սմ	պտղաբերումը	պտղաբերման շրջանը
1.	6	5,56	10-12	0,55	0,54	առատ	15-25/x
2.	6	4,25	10-12	0,58	0,54	առատ	15-25/x
3.	3	4,47	8	0,55	0,4	առատ	15-25/x
4.	7	5,25	13	0,43	0,5	առատ	15-25/x
5.	5	4,35	11	0,39	0,4	առատ	15-25/x

Ինչպես երևում է միջին տարեկան աճը ըստ տրամագծի կազմում է 0,5սմ, ըստ բարձրության 0,40-0,55 մ:

Տարիների փորձը ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղի միջին լեռնային գոտու բնակլիմայական պայմանները շատ բարենպաստ են շագանակենու կուլտուրաներ ստեղծելու համար:

Շագանակենու բնափայտը ավելի կայուն է քան կաղնունը և երկար ժամանակ պահպանվում է խոնավ պայմաններում: Կառույցներում պահպանվում է հարյուրավոր տարիներ: Նա օգտագործվում է նաև թանկարժեք կահույք և տակառատախտակ պատրաստելու համար: Պտուղները օգտագործում են որպես սննդամթերք հում և վերամշակված վիճակում: Կեղևը, բնափայտը և պտղագավաթը պարունակում են 8-13 % դաբաղանյութեր (մեծ քանակությամբ տանինները), պտուղներից ստացված յուղը, տերևները և կեղևը օգտագործվում են բժշկության մեջ: Ծաղիկները մեղրաբեր են: Շագանակենին շատ դեկորատիվ է ու օգտագործվում է փողոցների կանաչապատման համար:

Ամփոփում

Սովորական շագանակենու կուլտուրաները Լեռնային Ղարաբաղում

Ռ.Ի.Առուշանյան

Սովորական շագանակենին համարվում է մնացորդային (ռելիկտ) պտղատու թանկարժեք ծառատեսակ: Լեռնային Ղարաբաղում աճում է ինչպես բնականորեն, այնպես էլ կուլտուրաներում: 100 տարեկան կուլտուրաներում նրա միջին հասությունը կազմում է 73,8 սմ (44-108 սմ) բարձրությունը՝ 19(13-22 մ): Կուլտուրաներում սկսում է պտղաբերել 6-8 տարեկանից, ունի շատ թանկարժեք բնափայտ:

Культура каштана обыкновенного в Нагорном Карабахе

Р.И.Арушанян

Каштан обыкновенный является драгоценным третичным реликтом. На территории Нагорного Карабаха растет как естественно так и в культурах. Средний диаметр 100-летних культур составляет 73,8 см (44-108 см), средняя высота 19 м (13-22 м). В культурух начинает плодоносить с 6-7 лет, имеет очень драгоценную древесину.

Գրականություն

1.Арушанян Р.И.-Автореферат диссертации на соискание ученой степени кандидата биологических наук.
2.Арушанян Р.И. -Каштан съедобный в Нагорном Карабахе. Известия высших учебных заведений Лесной журнал N6, 1970г, г.Архангельск.
3.А.И.Ванин, Дендрология. Гослесбумиздат, Москва-Ленинград, 1960г.
4. Б.В.Гроздов, Дендрология, Гослесбумиздат, Москва-Ленинград, 1952г.